ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 15-16-19Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

25 դեկտեմբերի 2015թ.

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ. ՍԻՆՈՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ա.Լոպոյան
Ռ.Դալլաքյան
Հ.Իգիթյան
Հ. Բաբայան

Հրավրված՝ Լ.Բակումյան
Ա.Ազարյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՈՒԵՖԱ-ի կողմից Ուլիս ՖԱ վերաբերյալ պայմանավորված խաղերի զեկույցների քննարկում:

/Զեկուցեց ՀՖՖ իրավաբանական և կադրերի բաժնի պետ՝ Լ.Բակումյանը/

Զեկուցողը ներկայացրեց, որ՝

20.09.2014թ-ին կայացել է բարձրագույն խմբի 2014/15 թթ մրցաշրջանի "Շիրակ"-"Ուլիս" թիմերի հանդիպումը, որն ավարտվել է 1:2 հաշվով;
20.10.2015թ-ին կայացել է ՀՀ առաջին խմբի 2015/16թթ մրցաշրջանի "Ուլիս-2"-"Գանձասար- Կապան-2" թիմերի հանդիպումը, որն ավարտվել է 9:0 հաշվով;
25.10.2015 թ-ին կայացել է ՀՀ բարձրագույն խմբի 2015/16թթ մրցաշրջանի "Ուլիս"-"Ալաշկերտ" թիմերի հանդիպումը, որն ավարտվել է 0:3 հաշվով;
28.10.2015թ-ին կայացել է ՀՀ գավաթի 2015/16թթ մրաշրջանի "Ուլիս"-"Բանանց" թիմերի հանդիպումն որն ավարտվել է 0:3 հաշվով;
01.11.2015թ-ին կայացել է ՀՀ առաջին խմբի 2015/16 թթ մրցաշրջանի "Միկա"-"Ուլիս" թիմերի հանդիպումը, որն ավարտվել է 1:0 հաշվով:
28.11.2015թ-ին կայացել է ՀՀ առաջին խմբի 2015/16թթ մրցաշրջանի "Արարատ"-"Ուլիս" թիմերի հանդիպումը որն ավարտվել է 3-1 հաշվով:

Վերը նշված բոլոր հանդիպումների պայմանավորված լինելու վերաբերյալ զեկույցներ է կազմվել ՈՒԵՖԱ-ի կողմից, որում մանրամասն վերլուծության են ենթարկվել ամբողջ խաղերի ընթացքն ու դրա վրա կատարված խաղադրույքները:

Հարցի շուրջ ելույթ ունեցավ ԿԿ նախագահ Ռ.Սինոյանը, նա հայտնեց որ ինչպես միջազգային ֆուտբոլային կառույցների՝ ՈՒԵՖԱ-ի, ՖԻՖԱ-ի, այնպես էլ ՀՖՖ-ի կողմից որդեգրած քաղաքականության հենասյուններից մեկը ֆուտբոլային հանդիպումների մրցակցային սկզբունքի, ինչպես նաև արդար խաղի ապահովումն է:

Նշված խնդրի դեմ պայքարը շատ կարևոր է ինչպես ֆուտբոլային կառույցների, այնպես էլ ողջ հասարակության համար, քանի որ դրա կազմակերպիչները՝ բավականին մեծ գումարներ ներդնելով, ոչ միայն աղավաղում են աշխարհում մեծ մասսայականություն վայելող մարզաձևը, այլև փորձում են այդ միջոցով իրականացնել հանցավոր ճանապարհներով ձեռք բերված փողելի լվացում:

Տվյալ դեպքում հաշվի առնելով որ ՈՒԵՖԱ-ի զեկույցերից ակնհայտ է դառնում, որ “Ուլիս” ՖԱ չի կարողացել ապահովել իր թիմի մասնակցությամբ մաքուր և արդար խաղի սկզբունքի պահպանումը, ինչի արդյունքում ստացվել են պայմանավորված խաղերի վերաբերյալ վերը նշված բազնաթիվ զեկույցները, առաջարկում եմ քննարկել ակումբի նկատմամբ Կարգապահական Կանոնակարգի 12-րդ հոդվածով սահմանված պատսախանատվության միջոցների կիրառման հարցը:

Կարգապահական կոմիտեն, լսելով ելույթները, ուսումնասիրելով ՈՒԵՖԱ-ի կողմից ներկայացված զեկույցները, և հիմնվելով ՀՖՖ Կարգապահական Կանոնակարգի 12-րդ հոդվածի 1-ին կետին՝

Որոշեց

“Ուլիս” ՖԱ նկատմամբ կիրառել տուգանք 15 000 000 ՀՀ դրամի չափով:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԼՈՊՈՅԱՆ